

ԳԱՐԱԼԵՍՆՑ Ա.

ԳԱԼՈ ԱՓՕ

Մինչեւ մահ—զերեզված մարդ
պէտք է թռուանք սիրի:

Էջ 7.

Տ Փ Խ Ի Ւ

Ճպ. Մ. Ջարշակի. || Տիա. Մ. Շարաձե.

1895

ԱԿՐՈՒ

359

2004

Անդրեա
359

ՔՐԵԼԵՑՆՅԱ Ա.

ԳԱԼՈ ԱՓՕ

6 Տ 8

Միհեռն մահ—գերեզման մարդ
պէտք է թուսմբ սիրի:

Էջ 7.



Տ Ա Լ Ո Ա Փ Օ
Ճպ. Մ. Ջարշակի || Տիլ. Մ. Շարաձե.
1895

38243 ս.հ



Ա.

Ազ որ սահմանագլխից մօտիկէ ծնուած կամ ապրած, նա լաւ կիմանայ, թէ ինչ է նշանակում «եկան, հա եկան»—«տարան հա տարան» խօսքերը: Անչափ արհաւիրք ու սրտ դողութիւն են պատճառում այդ խօսքերը ամենին, մանաւանդ ընտանիքուոր մարդկանց:

1853 թ. ԲԵՀբուդովի կոուի ժամանակն էր և ահ ու դողը ամենայն կողմ պատելէր:

Ախալքալակ քաղաքը, որ սահմանագլխից 20—22 վ. էր հեռու, թափուրացել էր ժողովրդից: Փախչող փախչողի էր: Զարհուրած գիւղացիները կտրկան եղած ոչխարների պէս ցրում էին այս ու այն կողմը, որ գլուխներն ազատելու համար մի ճար ու հնար գտնեն:

Չորեքն ու գետափերը ադամորդիներով զժվժում էին՝ մանաւանդ Շաբաթի *) պատերի

*) Հին Ախալքալակի աւերակ:

Դօզուունի
Дозволено цензурою, Тифлисъ, 8 Апрѣля,
1895 г.



(3777)
41) 359-2004

(2455-60)

1/358

շուրջը: Աղքատ, հարուստ՝ տուն, տեղ թողած, ամախ այլ ու քարափի իրանց օթևան էին շինել և մէջը կուչուր արել սքած հաւերի պէս:

Թուրքերը շարունակում էին այստեղ-այնտեղ վրայ տալը, յարձակումներ անելը, որովհետեւ սահմանագլխի մօտ ռուսական ոչ մի հատ զինուոր չկար:

Հիմիկուայ Ախալքալակ քաղաքը այն ժամանակ երկու հարիւր տուն հազիւ ունէր. նրանցից քսան տուն վար ու ցանով էին պարապում: Բնակիչները ընդհանուր սարսափին չկարողանալով դէմ կենալ, ընտանիքներով անցել էին Փարվանայ գետը ու տեղաւորուել սարափեշերում գտնուող գիւղերում, ինչպիսի են՝ Զանջուղազ, Կորխ, Արագուայ և այլն:

Թուրքերի յարձակումը աշնան մօտերքին էր, ուստի գիւղացիներից շատերը իրանց խուրձը, հաշանը չէին կարողացել կրել ու կասել. այլ ամեն բան կիսատ թողած փախել էին ամուր տեղեր: Իսկ որոնք կասել՝ վերջացրել էին, ցորեն ու այլ հացահատիկներ շտապով հորերն էին ածել, նշաններ դրել, որ գտնելը հեշտ լինի, և իրանք հեռացել էին իրանց տուն ու տեղից:

Այդ սարսափին միւս գիւղերի թւում են-

թարկուել էր և Դադէշը, որ սահմանագլխից հինգ վերստ էր հեռու: Թուրքերը՝ այսինքն Օսմանցիք բարձրացել էին Դէօգ-Ղաղի գլուխը:

Այդ լեաւը ռուսաց և թուրքաց տէրութեանց մէջ սահմանագիծն էր կազմում. Նրա մի երեսը ռուսահալատակ հայերն էին, միւսը թուրքերը:

Խիստ տաք աշուն էր, ոչ ցուրտ կար և ոչ ձիւն: Ականատես ծերունիք վկայում են, որ այդ տարին՝ այսինքն 1853 թուին Յուն-վարից միայն սկսեց ձիւն գալ:

❖.

Պարսի կողմերից վաղուց եկել՝ Դադէ-շում բնակվում էր մի մարդ՝ Դալօ անունով: Սա քառասուն տարեկան էր գառել՝ միշտ ձիու վրայ ման գալիս. խոր ձորելը, բարձր սարե-րը նրա սիրած տեղերն էին. ազատակամ, ա-նահ մարդկանց հետ շրջում էր գիշեր ցերեկ և կեանքը սրտի ուզածի պէս անցկացնում:

Աւազակութիւնն էր նրա սիրելի պարապ-մունքը, որով կարողացել էր գող թուրքերին զարգանգեցնել:

— Թուրքին պէտք է ծեծես, որ բարեկա-մանալ, ասում էր Դալօն:

Թուրքերը նրան Դալի—Գեալստ *) էին ասում և նրա անունը արտասանելիս դողում։ Ոչ ոք սիրտ չէր անում ծուռ մտքով նրա ապրանքին կամ տանը մօտենալ։

Յիսուն տարեկան ժամանակ միայն սարու ձոր չափչիելուց ձեռք վերցրեց։ Դրա պատճառն էր մի թելու, սիրուն որբեալրի հարս, որին վաղուց աշքադրել էր. պսակուեց հետք և տուն նստեց։

Սյու կնկանից ծնուեց մի հատիկ որդի. մեծանալով գուրս եկաւ բոլորովին հօր հակապատկերը, — այսինքն մի թեթև ու թռվափկ ոքմին, այն ինչ Դալօն քչախոս մարդ էր, ինչպէս լինում են իգիթները, քաջերը։

Նատ անգամ բարկանալով յանդիմանում էր որդուն։

— Ա'խը, Ա'րզուման, քեզ պէսը պէտք է ըլի՞ իմ որդին։ Լաւ պտուղ ըլէիր, մի հատչէիր ծնուիլ։

Որդու հետ կոուելով սիրտը չէր հովանում. նրան թողում, բռնում էր կնկայ եախից. «Ո էջքդ կոտրի, այ կնիկ, ինչու անշնորք տղայ ես լոյս աշխարհ բերել»։ Խեղճ կինը չէր իմանում նրա բարկութիւնից ոնց աղատուի։

*) Գիշ Գալուստ։

Դալօն ծերացել էր արդէն, բայց արիասրտութիւնը ձեռքից չէր թողում։ Երբեմն երեմն գլուխը թափ տալով՝ ծերութիւնից գանգատողներին ասում էր.

— Միթէ հայ մարդը կը ծերանալ, կը թումբալանալ։ — Չէ, պատասխանում էր ինքն իրան, ձին որ ձի է, եթէ պառաւ ալզրից *) է յընդնել, հօր յեղը չի կորցնում. երկար ճամբալ է գնում, չի յոգնում. բա՛, մէնք որ հազար հազար տարեկան ազգի որդի ենք. ամօթ չի, որ թամբալ ըլենք։

Աչքով աչք չունէր վախլան տղերանց տեսնելու։ Միշտ պախարակում էր նրանց և ասում։

— Ախը աղքատը սրտոտ պէտքէ ըլի, որ սովամահ չըլի։ Վախկոտ ըլաւ, ունեցածը ձեռից կըխլեն։ Մինչև մահ — գերեզման մարդ պէտքէ թուանք **) սիրի, քանի որ ապրում է գազաններից վատթար թշնամիների մէջ։

Դադէշ գիւղում Դալօլին մեծ ու փոքր տիօ էին կանչում։

Ափօն ամեն Աստծու շաբաթ օր եւր գէնքերը կախած տեղից վէր էր բերում և

*) Որձ ձի

**) Հրացան

մեծ սիրով սրբում, մանաւանդ հրացանը, որ
ընտիր շէշխանա էր, փողի մէջը խազխզուտ:
Հէնց միայն եօթը թիգ երկէնք ունէր: Իրան
պէս իւր հրացանն էլ գովական էր ամբողջ
Ղարսի ու Ախալքալակի գաւառներում, եր-
բէք նշանը չէր խլաթում:

Նատ մարդ էր սպանել Գալօն դաշտե-
րում, ձորերում, շատերի դէմ կռիւս էր արել,
որոնց մասին երբեմն-երբեմն սիրով պատ-
մում էր, բայց գիւղամէջում արիւնհեղու-
թիւն ամենեին չէր արել:

Նրա անունը լսող ու ճանաչող հասակա-
ւոր թուրքերն աւելի էին պատւում, յարգում,
քան թէ Դադէշի երիտասարդները, որոնք քա-
մի կուլ տուող և մեծախօս արարածներ էին:
Նրանց չէր սիրում ափօն:

— Վայը գայ, ասում էր, այն գեղի ու
ազգի գլխին, որ ձեզպէս պարապ հացակեր
տղէք ունի:

Երիտասարդներն էլ ափօնի յանդիմանու
թիւններից նեղանալով նրան ծուռ աչքով էին
նայում և պարծենալով պատասխանում

— Ի՞նչ ես ամեն օր խայտառակում մեզ՝
թէ խանչալ կապեցէք, թուանք բանացնել
սովորեցէք: Եղը վտանգը կըգայ, քնած չենք
մնալ. այն ժամանակ մենք գիտենք, թէ ի՞նչ

շնորք ու իգիթութիւն ցոյց կըտանք, հիմի
ի՞նչ կայ որ....

¶.

1853 թուին վերջապէս վտանգն ու սար-
սափը եկել էր Դադէշի մէջն էլ: Ափօն 79
տարեկան ծերունի նստած էր հանգիստ իւր
օջախի ափին. ոչ ահ էր քաշում. ոչ երկիւղ: Վ-
սպսիկ Արգուման տղան էր, որ շուտ-շուտ
տուն պրծնելով հայհարայ մօրն ստիպում էր,
որ սարք ու սուրք անեն, ուրիշների թւում
իրանք էլ փախչեն գիւղից. ձորերում, այրե-
րում պահուեն:

Ծերունին ամեն անգամ զայրանում էր
որդու վրայ և չիբուխը նոր ի նորոյ չաղաց-
նում, ծխում հանդարտ թինկը տուած: Միայն
երբեմն-երբեմն աչքը ձգում էր պատից կա-
խած հրացանին ու յետոյ լոիկ ու կամաց
ձեռքը տանում դէպի մէջքը գնդակների շար-
քերը, իւր շինած փամփուշտները շոշափում:

Դադէշ գիւղը համարեա դատարկուել
էր: Գործ, պարապմունք ամենը թողած գըլխ-
ներն ազատելու հոգսումըն էին: Լեղապատառ
եղած կանանց ու աղջիկներին տղամարդիկ այս
ու այն ապահով ծերպերն էին տարել և տը-

ներն անտէր, անտիրական թողել:

Թուրքերի «տար հա տարն» էր. ճանկներըն ընկածը փախցնում էին, կարծես այդ օրերին արևը դրանց համար էր ծագում, դրանց փառաւորութեան ու վայելչութեան համար մէր մտնում:

Գիտէին թէ իւղալի պատառները-հարուստ մարդիկը ովքեր են գիւղում, մտնում էին նրանց տները և իրանց սրտի ուզածքաները, ուտելիքները ջոկջոկում, շալակում, տանում։ Առաջները կտրող, արգելող ըլկար։

Տեղտեղ տներում պառաւ կնանիքն էին տնպահ մնացել։ Բացի ափօյի տնից, գիւղում մի ուրիշ տուն էլ կար, որ իրան տեղը անշարժ, հանգիստ կացել էր. տարածուած սարսափը նրա անդամների վրայ մազաչափ էլ չէր ազդել։ Վարդեանանց տունն էր այդ։ Քաջասիրտ Մնօն այդ տան փեսան էր. իսկ աննման և սիրուն Շողերը նրա նշանածը։

Բայց ով էր Մնօն։

Մնօն միակ երիտասարդն էր Դադէշում. որ իւր սրտոտութեամբ սիրելի էր ափօյին, կարծես նրա աշակերտ։ Մնօյին դիպչել՝ նշանակում էր կայծակի կտորի դիպչել. ամենքըն էլ դողում էին նրանից, գիտէին որ

նա առանց շանթելու իրան դիպչողին բաց չի թողիլ։

Թուրքերը վախենալուց նրան քաղցը սալամ' (բարե) էին տալիս, իսկ Դադէշի պարծենկոտ, տանը հաւ սպանող տղեքը չէին կարողանում նրա փառքը տանել. աչքները ծակում էր։ Պատուելու փոխարէն նախանձում էին և «Աստուած, Աստուած» կանչում, որ փորձանքի հանդիպած տեսնեն նրան։ Այդ լափ լիզող ջահէլները թուրքերի հետ սէր կապելով՝ սկսում էին թուրքերին յորդորել, նրանց առաջնորդել դէպի Դադէշ և յափըշտակելու որսերի տեղը ցոյց տալ։ Նրանց մէջն էր և ափօյի տղէն, Արզումանը։ Կողոպուտից մասն ունէին դրանք էլ։ Թալանը թալան էր, խառնախաշ ժամանակ, ով կասկած կը տանէր թէ թուրքերի հետ հայեր էլ կան։

¶.

Մնօն իւր մօրը վերցրած անօր տունն էր քաշուել և հրացանը ձեռին դուրս ու ներս անում. Թշնամի մարդիկ աշխատում էին մի կերպ նրան տանից հեռացնել, որ կարելի լինի նշանածին՝ Շողերին փախցնել։

Դրա համար Մնօյի անօր ապրանքը

Դաշտից քշել տուին։ Այդ լուրն առնելուն պէս Մնօն տունը պահ տուեց իւր անօր տը- զերանց, ինքը ձիու քամակը թուաւ ու գնաց ապրանքի ետևից։

Հէնց այդ օրուայ իրիկնադէմին մի խումբ թուրք ձիաւորներ յարձակուեցին Մը- նօյի անօր տան վրայ։ Հարեաններից, որոնք մնացել էին գիւղում, մի քանիսը գուրս ե- կան, նայեցին, տեսան, որ թուրքեր են, վա- խից իսկոյն փախան, տները մտան, ցւքերի տակ պահուեցին։

Թուրքերը տեսնելով որ ոչ մի կողմից ընդդիմութեան նշան չկայ, վախակալած գիւ- ղացիք բաւականանում են միայն հեռուից ծկրակելով, աւելի սիրտ առան ու մտան տան բակը։ Մնօյի անօր տղէքը հէնց որ սկսեցին ընդդիմանալ, թուրքերը հրացանների կո- թերով խփեցին նրանց գլխներին, շլնքա- կոթներին։

Այս միջոցին էր, որ մի փայտ իրար ետ- նից մի քանի անգամ իջաւ թուրքերի գլխին։ Յետ նայեցին թուրքերը, տեսան դրան շէմ- քում կանգնած մի աղջիկ, սիրուն, աննման։ իրանց վրայ այսպէս է ծվում, այնպէս է ծը- զրտում՝ ոնց որ տղամարդ։ Թուրքերի ջանին կասես կրակ մաղուեց։ Դուռը կրնկի վրայ

բաց էր, թուրքերը նշմարեցին, որ ներսը մի քանի կնանիք էլ կան, պատի ու սիւների մօտ սարսափից կուչ եկած, կանգնած։

Թուրք գլխաւորը հայիլ—մայիլ եղած՝ դարձաւ մարմարի պէս սփարթնած Շողերին և ասաց։

— Ա՛յ գէօզալ, մենք քեզ համար ենք եկել. մեր որսն ես դու այսօր և քո ոտով դուրս ես եկել տանից։

— Ա՛լի, գիմեց գլխաւորը թուրքերից մինին, համեր, փէտը աղջկայ ձեռից խլի՛ր։

Եղբայրները քրոջ արիութիւնը տեսնե- լով իրանք էլ սրտապնդուեցին. ձեռքով, թէ փայտով մտադրուեցին ընդդիմանալ, բայց թուրքերը, որ ոտքից գլուխ զինավառ էին, թոյլ չտուին եղբայրներին փայտի հասնելու։

— Թուանքի բերան կըտանք, եթէ տեղնե- րից շարժուել էք։ — Ա՛յ գէօզալ, դիմեցին աղջկանը, որ կատաղած վագրի նման զնջուելով յարձակում էր իրան մօտեցող իւրաքանչիւր թուրքի վրայ, շատ մի փրփրտալ, քո խփելը մեզ համար վարդի փշի պէս քաղցը է, խնդրում ենք, լսիր, շատ դէս ու դէն մի ընկնիլ։ Օրը մթնում է, առանց ուշացնելու արի քու կամ- քով մէկիս գտաքին նստիր, գնանք։

Այս ասելով երկու թուրք վրայ թուան

բռնելու Շողերին, որ մէջքը դրսի սնին դէմ
էր տուել և կանգնել, բայց նրա փայտի հա-
րուածից թուրքի մինը ճակատը բռնած յետ
մզուեց և մէջքի վրայ փոռուեց, իսկ միւսը
աղջկայ թևը ճանկելով առաջ քաշեց:

— Բաւական է, ղանջղ*), մարդ չես սպա-
նելու հօ: Իու հայի փանդ չես, արի գնանք քու.
արժան մարդու մօտ:

Հէնց որ թուրքի ուժեղ կռները պատե-
ցին Շողերին, էլ չնայեց ոչ եղբայրներին և
ոչ մօրն ու հարսներին, որոնք լեղաճաք ե-
ղած տան ներսը լալիս էին ու շորերը,
երեսները ծուատում: Աչքը մի վայրկեան
գցեց կտըների, բաշերի վրայ կանգնած երի-
տասարդներին, որոնք քարի նման մնացել էին
անշարժ: Միտ բերելով իւր նշանածը սրտից
խոր ախ քաշեց.

— Մնօ ջան, ուր ես, Շողերիդ տարան,
ախ, կոտորուին մեր գեղի վախկոտ ջահէլնե-
րը: Յսլսս դու ես, անջիգեար, հասիր:

Այս աղէխարշ ձայնի վրայ պառաւ կնա-
նիք իրաբով անցան, ահ—մահ մոռացած
կտըէ կտուր թուան:

— Ի՞նչ էք փէտի պէս կանգնել, տղամար-

դիկ չէք, ամօթ ձեր փափախներին, նախա-
տեցին թամաշաւոր մարդկերանց:

Այս կծու խօսքերից մի քանիսը կարմրե-
լով սիրտ արին, շարժուեցին տեղներից, մօտ-
կացան թուրքերին. լեզուակոիւ անելով ըր-
թողին, որ աղջկանը տանեն:

Զէն ու ձունը ամբողջ գիւղը բռնել էր:
Թուրքերից մինը հրացանը երեսը կալաւ
և հայերին վրապրծնելով գոռաց.

— Ով հուջաթ*!) է անում, թող թուանքիս
առաջին կանգնի:

Հրացանի բերանը որ տեսան ժողովուած
գիւղացիք՝ ահից հաւերի պէս քիշ-քիշ եղան:

Թուրքերից երկու հոգի Շողերին խտաե-
ցին և դրին մի ձիաւորի գաւաքի: Իսկ միւս-
ները համարձակ ու անվախ գիւղի մէջտե-
ղով գնացին:

Շողերըն իրան տանողների հետ կռվում,
և բարձր ձայնով ծփում էր, գլխին թաշկինակ
չէր մնացել. երկար ծամերը շաղ անցած
ծածանւում էին ուժեղ ուսերի այս ու այն
կողմը:

Անգութիւնուրքերը առիւծասիրտ աղջկան
ամուր սխմել և թոկով կապկանել էին ձիաւո-

*) Քած

*) Հակառակութիւն

ըի քամակից, որ ձիու գաւաքից վէր չընկնի.
ու փախչի:

Ե.

Այս հարայ-հրոցի ձայնը վաղուց հասել
էր գիւղի ծայրը: Այդտեղ էր գտնվում Ափօլի
տունը: Նա քանի ուզում էր գեղամէջ դուրս
գալ և իմանալ թէ ի՞նչ աղմուկ է, կինն ու
տղէն խորհուրդ էին տալիս, որ տեղից չշար-
ժուի:

Կինը պատճառ էր բերում, — ալ մարդ, կը-
գնաս թուրքերի հետ կախ կըտաս. ծեր մարդ
ես, կըխփեն, անպատիւ կանեն քեզ:

Իսկ տղէն չէր կամենում հօր դուրս
գալը, որպէսզի Շողերի փախցնելը ոչ մի
արգելքի չհանդիպի: Նրա մէջ իւր մատն
էլ խառն էր:

Մինչև վերջը Ափօն չհամբերեց, տեսաւ
որ զոբոոցը շարունակումէ, վեր թուաւ օջա-
ղի մօտից, չիբուխը գօդիկը խրեց, հրացանը
շտապով պատից վէր բերեց, աղջօթին նորեց
ու դուրս եկաւ առանց կնկան ու որդունուշ
դարձնելու:

Տեսաւ ահա մի քանի կանալք դէպ իրան
են վաղում: Սրանց մէջն էր Շողերի մայրը:

— Ափօ ջան, ալիքիդ դուրբան, լացա-
խառն գոչեց ջրատար կինը, Շողերիս տարան,
Մնօն տանը չէ, յոյս դու ես մնացել, օգնիր,
ճար արա:

— Ո՛վքեր տարան, երբ տարան, շփո-
թուելուց կակագելով հարցրեց ծերունին:

— Թոնւրքերը, թուրքերը, հեծկլտալով
պատասխանեց Շողերի մայրը, հէնց հիմի տա-
նում են: Հորէն-հորէն թուրքի գաւաքին կա-
պած Շողերիս տանում են:


Ափօյի սիրտը յուզուեց. ախ քաշելով շըր-
թունքները սղմեց, նայեց աջ ու ձախ, տե-
սաւ բաւական հեռու մի քանի թուրքեր
կանգնած: Կարծելով որ դրանք տանողների ըն-
կերներն են, հրացանը երեսը կալաւ ու ճուաց:

— Է՛ հէլ նամարդ *): շներ, էս օրէն էիք
ճամբալ պահում, որ ես ծերանամ, դուք գաք
գեղից աղջիկ փախցնէք: Զէ, Ափօն դեռ էնքան
չի մեռել, նրա արիւնը կոներում հալառդ է:

Մինչև հրացանի ոտը քաշելը՝ թուրքերն
առաջից անյալտացան, որ ափօյի զարհուրիչ
ծղրտոցի հետ գիւլլա խորով չլինին:

Ափօն ինքն իրան դառնալով գոչեց.
— Էհէլ ջահելութիւն, գութ ու ողորմ ունե-
ցիր, շնորքներիս մի կտորը տուր ինձ էս մի-

*) Տմարդ, ապերախտ



զոցին։ Եա Տէր Աստուած, նամարդի մոհտաջ
շանես էս ծեր ժամանակս։

Այս ասաց ու կնանոնց հետ շտապ քայ-
լերով մօտիկ թմբի գլուխը բարձրացաւ։

— Ո՞րն է ձիաւորը, աչքս լաւ չի կտրում։

— Հորէն, ափօ ջան, երևում է. ասաց մի
կնիկ լացակունած։

Նողերի մայրը ետևից վրայ բերեց.

— Ա՛խ, ուր էր թէ էս սհաթիս Աստուած
ինձ քոռացնէր, աչքիս լոյսը քեզ տար, ափօ
ջան, որ իմ Նողերի տանողին տեսնէիր ու ջի-
գեարը խորովէիր։

— Քիչ սիրտդ հանդարտ պահիր և ինձ
ականջ կալ, խօսեց ափօն։ Մի ձիաւոր եմ
տեսնում, որ ծանր գնում է և քամակից մի
բան օգում փոփում է, նա է»։

— Հէնց նա է, ափօ ջան. ձիաւորը անի-
րաւ թուրքն է, փռփռողն էլ Նողերի ծամերն
ու մագերն են։ Լացի ձէնը դեռ լսում է,
ջնն, բալա ջան, կրկնեց խեղճ մայրը և կող-
քի վրայ ընկաւ։

— Տեսայ, հասկացալ։ Դէ, դուք միա-
միտ կացէք, սիրտ տուեց ափօն, միայն ձեզա-
նից մինը թող շուտով հասնի, մէկի բերանով
իմաց տայ, որ Նողերը թուրքի քամակից թե-
քուի, թուրքի թիկունքն երևայ։

Առանց վարկեան կորցնելու մի պառաւ
միւսին ասաց, նա էլ մէկէլին, երրորդին,
չորրորդն էլ իւր կտրի ծայրից ճուաց։

— Զան Նողեր, հէլ, ափօն ձիաւորին
նշնում է, աջ կշտի վրայ կաց. արևիդ զուր-
բան, աջ կշտի...»

Մինչեւ ալդ ժամանակ Նողերն այնքան
ձգձգել էր, որ կապած թուկը թուլացել էր։
Թուրքն ուշադրութիւն չէր դարձնում, յու-
սալով որ ընկերները ետնից գալիս են, եթէ
ընկնի էլ, նրանք կը բունեն աղջկան։

Նողերը խուլ հեկեկաց ու դէպի աջ թե-
քուելով կախ ընկած մնաց։ Թուրքը կարծեց
որ աղջիկը սրտանեղութիւնից նուաղել է. ձին
ոտն արեց, որ ընկերները գան, հասնեն։

Այդ միջոցին ափօյի հրացանը տրաքեց։
Հրացանի տրաքելն ու թուրքի աման գոռալը
մէկ եղաւ։ Թէ թուրքը և թէ Նողերը իրար
հետ ձիուց ընկան։ Պառաւները կարծեցին թէ
ծերունուգնդակը սխալմամբ Նողերին է դիպել,
սարսափած դոչեցին։

— Ափօ, վայ ափօ, Նողերին սպանեցիր
թուրքի տեղը, մուրազաչոր եղաւ խեղճ աղ-
ջիկը։ Նաշար Մնօ, խաւարեց նրա աստղը։
Վաշ-վաշ Նողեր, ախ ու վախ Մնօ...»

— Թէ նշանն իմն է, պատասխանեց ա-

փօն սառներես, Շողերը կենդան է, զուր միլաք, փորձուած ձեռը նշան չի խլաթիլ: Մազ ըլի, կը ջոկի, ի՞նչ թէ թուրքի թիկունքը: Վազէք, գնանք:

Խսկոյն կնանիքը մի մի փայտ առած ափօլի հետ շտապեցին Շողերի լնկած տեղը: Դադէշիտներում ու կտրներին ինչ շունչոր կար, սիրտ առած խուռն կերպով վազեցին: Ամենից բարձր լսում էր ափօլի ծղրտոցը և հրամանը:

— Տուէքէդ շներին, քարե՛րով, քարե՛րով: Ա՛խ ջահէլներ, ձեր տղամարդութիւնը նզոված, նախատում էր ծերը հետզհետէ երեցող տղերանց, ձեր անունը հայ պէտք է ըլի: Դուք պէտք է գեղ պահէք. պառաւների չափ կտրիչ չունիք, գոնէ նրանցից ամաչեցէք, որ մի մի ձողի են վերկալել: Ինչու ձեռներիդ թուանք չունիք: Ի՞նչ էք ձեռներդ ծոցներումդ դրել: Խելքը գլխին մարդը անփէտ շըների մէջ ման կը զայ: Դեռ ծերունուս վրայ ծիծաղում էիք, թէ ինչու եմ թուանքը սրբում կամ թամբաքուի հետ խառը ջիբումս գնդակ պահում:

Ափօլի այս խօսքերից տղէքը սրտովացած յարձակուեցին թուրքերի վրա, որին ձիաթափ արին, որին ծեծեցին, որի զէնք-մէնքը խլեցին: Մինչեւ ուրիշների օգնութիւն հասնելը

Շողերը ինքն էր իրան թուրքի գաւաքից ազատել ձիուց ընկնելուց յետոյ: Տեսնելով, որ գնդակը դիպել է, բայց թուրքը դեռ շունչ է քաշում, իսկոյն նրա դաշոյնը հանել էր ու պնչին խփելով սատկացրել: Ափօն երբ հասաւ ու Շողերի ձեռին դաշոյնը արիւնթաթախ տեսաւ.

— Ապրես, Շողեր ջան, ասեց ու մօտքաշելով ճերմակ ճակատից համբուրեց: Երանի կը լինէր ինձ, որ իմ աղջիկը լինէիր: Ապրի քեզ բերող արգանդը. թող քեզանից գոնէ քաջութիւն սովորեն մեր վախկոտ ջահելները: Ապրես Մնօլի համար, նա է միայն քեզ արժան: Էնքան չմեռնեմ ձեր պսակն էլ տեսնեմ:

Զ.

Սրանից յետոյ երեք չորս ամիս միայն քաշեց ժողովրդի ցաք ու ցրիւ մնալը:

1854 թ. Յունվարին ոռուսաց զօրքերը հասան սահմանագլուխը: Ամեն մարդ իւր տունը դարձաւ, բայց թողած ապրանքներից շատ քչին տիրացաւ: Պահուստներից՝ որը տարել էին, որի էլ նշանը ոտնատակել, կորցը էլ խառնակ ժամանակ: Նատ բաներ մնացին գետնի տակ թաղուած «վայ տէր» կանչելիս:

Ոչ մինը տարածի, փախցրածի հոգսումը չէր, ոչ ով էլ չէր մտածում իւր ապրանքի

ետևից գնալ. բայց Մնօն էնչ կը թողէր
իրանից մի մազ կորչի. քշած տաւարը՝ գնաց.
թուրքերի ճանկից խլեց, վերադարձրեց:

Դեռ Դադէշ չմտած Մնօն Շողերի գլխին
եկած դէպքը լսեց. մի բարեկամ մարդուց.
իմացաւ թէ ով է ազատել Շողերին: Գիւղ
հասնելուն պէս վազեց Ափօյի գիրկն ընկաւ,
տասն անգամից աւելի այն ձեռները համբու-
րեց, որ իւր նշանածին ազատող հրացանը
բըռնել էին:

— Մնօ ջան, խօսեց Ափօն, մեծունանց
խօսք է, թէ սոխի դէմսխտոր պէտք է
ծեծել: Էս օրից հաւաքուեցէք ջահելներդ միա-
տեղ և վրայ տուէք թուրք օբաններին: Իմ խոր-
հուրդն էս է, թուրքերի աչքը պէտքէ տու-
րով, թակով վախեցնել:

— Աչքիս վրայ, ափօ ջան, խօսք տուեց
Մնօն ու կազմեց դադէշցիներից մի լաւ խումբ:
Ալդ խումբը այս ու այն թուրք օբանների
վրայ յարձակումներ անելով՝ մեծ ծառայու-
թիւններ արեց ոռւս գօրքին:

«ԲԵՀԲՈՒՊՈՎԻ կոհիւ» կոչուած պատերազմը
թուրքերի դէմ վերջացաւ 1856 թուին. քաջ Մը-
նօն այդ ժամանակ ամուսնացած էր»: Շուտ
պսակուելուառիթը այնքան Շողերին վախցնե-
լու ահը չէր, որքան, ափօյին ուրախութիւնը

պատճառելը: — Ափօ ջան, ասել էր Մնօն երկու
տարուց առաջ, ես պատրաստ եմ քու ասած
խումբը հաւաքել, թուրքերի վրայ յարձակում-
ներ գործել, մէկի տեղ քսանը սպանել, միայն
թէ դու էլ իմ խնդիրը պէտքէ լսես:

— Ի՞նչ է խնդիրդ, որդի Մնօ, հարցըրել
էր ծերունին:

— Իմ խնդիրն էն է, ափօ, որ դու ծեր
տեղովդ իմ խաչեղբայրը դառնաս: Գիտես որ
էն գլխից ես հէր չեմ ունեցել, հօր տեղ քեզ
եմ սիրել ու ալաշտել:

— Ափօյի աջ աչքի վրայ քո խնդիրը,
Մնօ ջան, պատասխանել էր ծերունին ու սի-
րով կատարել նրա առաջարկը: 80 տարեկան
Գալօ-Ափօն ճերմակ ալիքներով զարդարուած
եղել էր Մնօյի ու Շողերի խաչեղբայրը:

Թէպէտ դադէշցի Տէր Մարտիրոսի սըր-
տովը չէր ժամում հին աւազակին խաչեղբայր
տեսնելը, բայց արգելք դնելու պատճառ չու-
նէր: Ալն գլխից ափօն Տէր Մարտիրոսին ա-
տում էր. գիւղի տղերանց վախկոտութիւնը
վերագրելով նրա սլընդի խրատներին:

Տէրտէրի օրհնանքից յետով ժամումը ինչ
որ բարեկամներ կային, բարեմաղթութիւններ
էին արել: Ափօն ամենից վերջը Նորապսակ-
ներին մօտեցել էր և ասել.

— Զահէլ նորապսակներ, էդ է հօ դուք
ձեր մսւրազներին հասնում էք. խնդրում եմ
մեղաւոր բերանովս Աստծուց, որ ձեր լոյսը
մեր գեղի վրայ կաթի, ձեզանից ծնած որդի-
ները՝ աղջիկ թէ տղայ՝ ձեզ պէս սրտոտ, ձեզ
պէս քաջ ըլեն:

— Մէկ էլ քեզ պէս, Դալի Գալօ, քեզ
պէս. վրայ էր բերել Տէր Մարտիրոսը արհա-
մարհանքով:

— Հա, տէրտէր, ինձպէս և ոչ թէ քեզ
պէս ու իմ անշնորհք որդու պէս, պատաս-
խանել էր ծերունին ծաղրական ձեռվի:

Ներկայ եղողները այս պատասխանի վրայ
կուշտ քմծիծաղ էին տուել: Տէր Մարտիրոսին
շատ տեղ էր եկել այս ծաղրը. կատաղի բար-
կութիւն էր փալլել նրա դէմքի վրայ, կար-
ծես նոյնը մխացել էր և սրտի ներսը:

— Ի՞նչպէս է համարձակւում հին աւա-
զակն անպատուել ինձ ժողովրդի տուաջ, ես
նրան ցոյց կըտամ, մտմտացել էր նա տուն
դառնալիս և այդ ոխը սրտում անմոռ պահել

Ե,

Պատերազմի սարսափն անցել էր և ա-
մեն կողմ խաղաղուել: Դադէշ գիւղի միւս
ծերերի կարգում Ափօն էլ գնում էր ժամ,

ճաշակուելու համար իւր մեղքերը ապաշխա-
րում: Տէրտէրը ամենին խոստովանում էր,
ամենի մեղքերը ներում ու, հաղորդում, իսկ
Ափօնին դառնալով ասում.

— Մեղքդ շատ է, քեզ դեռ հաղորդ չի
հասնիլ:

— Մեղքս ինչ է, որ շատ է, հարցնում
էր Գալօ ափօն:

— Մարդիկ շատ ես սպանել:

— Ա՛յ երեց, սպանածս մարդիկը անօրէն-
ներ էին, հօ հայ ու քրիստոնեալ չէին, ինչք
պէտք է մեղք ըլի:

— Զէ, չի կարելի, նրանք էլ Աստծու
ստեղծած են:

— Ախր, տէր հայր, ես որ նրանց չսպա-
նէի, նրանք ինձ կըսպանէին. բա՛ ես Աստծու
ստեղծած չեմ:

— Դու աւազակ ես եղել, աւազակին ըս-
պանելը մեղք չի:

— Նրանք որ աւազակ չէին, բա Աստծու
գառներ էին. արի, մի անիլ, տէրտէր, ինձ
մի չարչարիլ, մեղք արի ծեր հասակիս: Տես-
նում ես, որ արածներս զղալով աշխար-
հի առաջմէկ մէկ խոստովանում եմ, մի զրկիլ
ինձ հաղորդից՝ այն Քրիստոսի արիւն ումարմինն
ընդունելուց, որ ինձանից վատթար աւազակին

իւր սուրբ բերանով ներեց ու արքայութեան
լաւ տեղը նրան նշանակեց։ Ես անարժան
հոգի եմ, արքայութիւն գնալու յոյս չունիմ,
թող ճաշակուեմ, ալդ մխիթարութիւնն էլ է
ունենամ մեռնելուս ժամանակ։ Մահը մերն
է, մենք մահինն ենք, ութսունն անց կա-
ցած մարդ եմ, արի, հասակիս խղճա,
դու իբրև միջնորդ հաղորդը՝ տուր, երկնա-
լին դատաւորը գիտէ, ինչպէս որ անհուն մե-
ղաւորիս կըդատի։

— Զէ, չի լինիլ, կտրական կերպով մեր-
ժում էր Տէր-Մարտիրոսը, քեզ պէս մար-
դասպանին հաղորդ չի հասնիլ, պէտք է շատ
ապաշխարես։

¶.

Ամենայն տարի մի պատճառ բերելով
Տէր Մարտիրոսը ափօյին բանադրում էր իբ-
րև մարդասպանի և հաղորդից զրկում։ Խեղճ
ծերունին անձայն համբերում էր։ Տասը տա-
րի անցաւ և հաղորդի կարօտ Գալօ-ափօյին
տէրտէրը սրբութիւն չտուեց։

Քանի ափօյի հասակը կոտրում էր, այն-
քան նրասարսափը շատանում էր։ ծերունին վա-
խենում էր անհաղորդ մեռնելուց։ Զէր իմա-
նում, ինչ անի։ Լսել էր, որ Ախալքալա-

կում մի տէրտէր կայ՝ սրտոտ ու լաւ հրացան
գցող։ Մարդամիջով իմաց տուեց նրան—այ-
երէց, ինչ կըլի Դադէշ գաս։ Այդ քահանան էլ,
որ կտրուկ, ձի նստող մարդ էր, լսած էր ով-
լաւ հրացան բռնող մի ծեր կայ Դադէշում,
որին ողջ գիւղովի ափօ են ասում։

Ծնորհքով մարդիկ աշխարհի ծայրերից
իրար տես են գնում, ուլ մնաց Ախալքալա-
կըն ու Դադէշը, որ իրարից 16 վերստ են
հեռու։ Զահէլ Տէր Ստեփանը մի պատճառ
էր փնտում, որ Դադէշ գնայ ափոյին տեսնե-
լու։ Պատճառն ինքն իրան լոյս ընկաւ, երբ
Դադի-Դալօն մարդամիջով նրան հրաւիրեց։

1866 թ. աշունն էր, Տէր Ստեփանը
վերկացաւ, գնաց Դադէշ, տեսաւ ծերունուն։
«Ողջն» ասեց, ծերն էլ «Օրհնեա տէր» ասե-
լով վրայ ընկաւ պարթևահասակ տէր Սիձե-
ռը համբուրեց։

Ծերունի ու տէրտէր նստեցին, քաղցր
խօսակցութիւն կցեցին։ Ափօն զրոյցներ
արեց անցած, գնացած բաների մասին։
Տէր Ստեփանը լսածներին քիչ էր մնում, թէ
չհաւատալ. պատմողը միկծղած, զառամեալ ծե-
րունի էր, առաջը նստած չիրուխը փստաց-
նում էր և «Փո՞ւ» անելով գուշիկ բերանից
ծուխը քուլա-քուլա բաց թողնում։

— Ավո, ափսոս, որ քու ջահէլ ժամանակ ծնուած չեմ եղել, կուզէի էդ քու պատմածներից մինն ու մինը աչքով տեսնել: Քու մասին հայրս էլ է պատմել, ուրիշներից էլ եմ լսել, բայց քաջութիւններիցդ շատերն ինձ անհաւատալի են թվում:

— Տէրտէրջան, աշխարհիս վրայ Աստծու հետ հօ եղբայրանալու չենք. ի հարկէ ծնուռովը կըծերանայ և ամեն շնորհք կըկորցնի էլ: Քաջագործութիւնները հէքիաթի պէս բաներ կըթուան նորահասներին: Ի՞նչ անենք, աշխարհ իրար գլխով տուող մարդկանցից ով է մնացել հողի վրայ, որ մենք մնանք:

— Ավո, քու մասին լսել եմ, որ երևելի ձի նստող ես եղել, զարմանալի հերոսութիւններ ես արել: Անցկացած բաներ են, բայց հաւատում եմ. որովհետև շատ ծերերից եմ լսել, միայն թուանք գցելդ, նշանի տալդ կուզէի հիմի աչքովս տեսնել: Ըղորդ են ասում, որ նշանի լաւ ես խփում:

— Ա՛յ, տէրտէր, էդ խօսքովդ սրտիս լաւ տեղերն ես յեռ բերում, ափսոս որ ուշ ես վրայ հասել: Ի՞նչ անեմ հիմի, որ խօսքդ տափը ընկնի, իմ սրտի սիրած տէրտէրն ես ու հազարից մի անգամ մի բան ես խնդրում: Երանի թէ Աստուած ջահելութեանս թռած

օրերից մինը յետ տար: Լսել եմ, որ դու էլ՝ հակառակ մեր տէրտէրի՝ լաւ ձի նստող ու թուանք բռնող ես: Ես ու դու իրար հետ մելդան դուրս կը գալինք, ձի կը խաղացնէինք, թուանք կը գցէինք: Ասած է. — բեր ջահալլոդա, բեր աշխալլոդա, էս վուչ աշխարդից բնչ ենք տանելու: Նիտակը որ ասեմ, սրտի կողմից էլի էն վաղի ջահէլն եմ, բայց էս անտէր մէջքս ծերութիւնից փետացել է:

— Զէ, ափօ, թախանձեց Տէր Ստեփանը, Ախալքալակից ես էն մտքով եմ եկել, որ քո շնորհքներից մինը տեսնեմ: Արած զըոյցներդինձ վառել են, մի բան արա, մի շնորհք ցոյց տուր:

Ափօն ձայն չհանեց, խորշոմներով զարդարուած ճակատը շինեց, տեղից վեր կացաւ, գնաց տան պատից կախած հրացանը դուրս բերեց: Վրայի դեղին կապերը հրհրատում՝ պլալում էին:

— Իմ հաւանած տէրտէրն ես, խօսքդ չեմ կոտրիլ, խօսեց ծերը: Դեռ տիրոջ մօտ յոյս ունեմ, որքեզակէս կարգաւորի կշին ամօթով չթողնի:

Այս ասելով իսկոյն աղջօթին նորեց և հրացանը թափահարելով խօսեց.

— Տեսնում ես՝ Տէր Ստեփան, էն բարակ

ոստի վրայ կանգնող ծիտը, մտիկ, թէ ո՞նց
պէտքէ ճիտը թոցնեմ։ Հօ տեսնում ես, ի՞նչ-
քան հեռու է, եթէ ծտի գլուխը պոկուեց,
իմացիր որ Գալօափոյի տարածն է։ Են ժա-
մանակ ես էլ մի խնդիր ունեմ, դու էլ իմ
խօսքը չպէտքէ կոտրես։

Ասեց ու հրացանը՝ կուռը կալաւ 92 տա-
րեկան հայր։

— Յօժար եմ կատարելու, ինչ խնդիր էլ
ունենաս, եթէ խօսքդ դրստուի։

Մինչև Տէր Ստեփանը բերանի խօսքը
կ'աւարտէր, հրացանը գրըմփաց և ծիտն անդ-
լուխ կնդլուկի տալով ընկաւ ոստի վրայից։
Տէր Ստեփանը երեխայի պէս ցնծալով վազեց,
ծիտը վերցրեց ու կարմրուտակած դարձաւ ծե-
րունու մօտ։

— Ես, ըղորդ է, տէրտէր եմ, բայց համ-
բուրելու արժանը քո՞ ձեռն է, ափօ, աջդ ինձ
տուր, պէտքէ համբուրեմ։

— Զէ. ո՞նց կարելի է, տէրտէրը աշխար-
հականի ձեռը համբուրի։

Բայց որքան էլ ափօն ձեռքը դէս ու դէն
փախցրեց, Տէր Ստեփանը բռնեց, մի քանի
անգամ պաշպէց ու զգացուած սրտով խօսեց։

— Ափօ, խնդիր չէ որ, հրաման կատա-
րելու պատրաստ եմ, քեզ պէս աննման քաջին

գլուխս մատաղ է։ Համարձակ ասա՛. մի՛ քա-
շուիլ, ի՞նչ է հրամանդ։

— Տէրտէր ջան, ես հրամանի ոչինչ չու-
նեմ, խնդիր է, բայց դժուար խնդիր։

— Ի՞նչ խնդիր է, որ էդքան դժուար
ես համարում։

— Դժուարացնողը մեր տէրտէրն է, ես
չեմ։

— Ի՞նչ բան է, ասա տեսնեմ։

— Ես 10 տարի է, անհաղորդ եմ, եթէ
կարելի է, տէրտէր ջան, ինձ սրբութիւն տուր։

— Ի՞նչ դժուար բանէ սրբութիւն առնե-
լը, որ էդքան ժամանակ թողել ես։

— Ես չեմ թողել, տէրհայր, ինձ անար-
ժան համարելով սրբութիւն չեն տուել։

Եւ սկսեց ծերունին Տէր Մարտիրոսի ա-
րամունքը մանրամաս պատմել և հեկեկալ։

Տէր Ստեփանը նայելով նրա աչքերից թա-
փուող արտասուբքներին, ընկաւ գիրկը և ասաց։

— Ափօ ջան, ես գրքերի խորը չեմ կար-
դացած. որ մեկնութիւններով քո արդարու-
թիւնը վկայեմ, բայց ճշմարիտ խոստովան-
ւում եմ, որ դու քո անկեղծ զղջման արտա-
սուբքներովդ աւելի արդարացած ես Փրկչի դա-
տաստանի առաջ, քան թէ ես ու Տէր Մարտի-
րոսը։

Տէր Ստեփանի Դադէշ գնացած օրը շաբաթ էր. գիշերը հիւր մնաց Գալօ ափօյի տանը. սաղմոս քաղեց ու ափօյի սիրու համար էգու փառաւոր պատարագ արեց, ճաշակեց ափօյին։ Ափօն այդ օրը հացկերոյթ ունէր, գիւղի առաջաւոր մարդկանց հրաւիրել էր։ Ներկայ էր ալգտեղ և Տէր Մարտիրոսը։

Զգիտեմ ինչ կը լինէր նրա սրտի հալը։

Հետեւալ տարին՝ այսինքն 1867 թ. մեռաւ պատուական Գալօ ափօն։ Մեռած ժամանակ լողացնողները շորահան անելիս նկատել էին հագուստի վրայ կոշտ բաներ. կարծել էին թէ արծաթ փողեր են արխալուղի մէջից կարած։ Դրա համար արխալուղի ծածուկ փախցրել էին։ Բայց շորի կարերը քանդելովարծաթ փողի տեղ գտել էին հրացանի լցրած փամփուշտներ, որ ափօն պահում էր անակնկալ վտանգների ժամանակ գործ ածելու համար։

93 տարեկան մեռաւ Գալօ ափօն։



ՀՀ Ազգային գրադարան



NL0685912

- 1/2
3. Հղումներ դատիության
2. Գղեցից լրացնելը պահպան.
1. Տիկ Հայկ Ռզեպ (1877 թարմակի վեցեց)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿՐՈՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Տասնակ թիւ 30 Համայնքագույն մասնակություն

գիշե և 25 դար.